

Medi-Cal-ն ունի ատամնաբուժական ապահովագրություն



Որպես Medi-Cal-ի անդամ, ձեր և ձեր երեխայի նպաստները ներառում են ատամնաբուժական ապահովագրություն: Ստորև ներկայացված է Medi-Cal-ի կողմից տրամադրվող ատամնաբուժական խնամքի վերաբերյալ աղյուսակը:

ՃԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՆՈՐԱԾԻՆՆԵՐ	ԵՐԵՒԱՆԵՐ	ԴԵՌԱՀԱՍՆԵՐ	ՀՂԻՈՒԹՅՈՒՆ	ՄԵԾԱՀԱՍՍԱԿՆԵՐ	ՏԱՐԵՑՆԵՐ
Քննություն*	✓	✓	✓	✓	✓	✓
Ռենտգեն	✓	✓	✓	✓	✓	✓
Ատամների մաքրում	✓	✓	✓	✓	✓	✓
Ֆտորիդային լաք	✓	✓	✓	✓	✓	✓
Պլումբներ	✓	✓	✓	✓	✓	✓
Ատամի հեռացում	✓	✓	✓	✓	✓	✓
Շտապ օգնության ծառայություններ	✓	✓	✓	✓	✓	✓
Հանգստացում	✓	✓	✓	✓	✓	✓
Սեղանատամի հերմետիկներ**		✓	✓			
Արմատի խոռոչներ		✓	✓	✓	✓	✓
Օրթոդոնտիա (բրեկետներ)***			✓			
Ատամնապակներ****			✓	✓	✓	✓
Ամբողջական և մասնակի պրոթեզներ			✓	✓	✓	✓
Պրոթեզների ամրացում			✓	✓	✓	✓
Ատամնաքարերի հեռացում և արմատի պլանավորում			✓	✓	✓	✓

*Անվճար կամ ոչ թանկ ստուգումներ յուրաքանչյուր վեց ամիսը մեկ՝ մինչև 21 տարեկան անդամագրվածների համար, 12 ամիսը մեկ՝ 21 տարեկանից բարձր անդամագրվածների համար:

**Մշտական սեղանատամային հերմետիկները ապահովագրված են մինչև 21 տարեկան երեխաների և դեռահասների համար:

***Մրանց համար, ովքեր համապատասխանում են չափանիշներին:

****Սեղանատամների կամ նախասեղանատամների (հետևի ատամների) պակները որոշ դեպքերում կարող են ապահովագրվել:

ՄԱՆՈՒԿՆԵՐ

Ատամնաբույժի մոտ ձեր երեխայի առաջին այցելությունը պետք է տեղի ունենա առաջին ատամի հայտնվելուց հետո, բայց ոչ ուշ, քան առաջին ծննդյան օրը: Մանկական ատամները կարևոր են ձեր երեխայի առողջության և զարգացման համար: Դրանք օգնում են նրան ծամել, խոսել և ժպտալ:

ԵՐԵՒԱՆԵՐ

Երեխաները սկսում են կորցնել իրենց մանկական ատամները հինգ տարեկան հասակում: Սա տեղի է ունենում այն ժամանակ, երբ մշտական ատամները սկսում են աճել: Ատամնաբույժից խնդրեք սեղանատամի հերմետիկներ՝ ձեր երեխայի սեղանատամները խոռոչներից պաշտպանելու համար:

ԴԵՌԱՀԱՍՆԵՐ

Շաքարային սննդամթերքի և խմիչքի օգտագործումը, ինչպես հաճախ անում են դեռահասները, նրանց կանգնեցնում է լնդերի հիվանդության և ատամների քայքայման ավելի մեծ վտանգի առաջ: Կանոնավոր ստուգումներ անցնող դեռահասները ապահովում են իրենց ատամների առողջությունը մինչև հասուն տարիք:

Իմացեք ավելին ձեր ստոմատոլոգիական նպաստի մասին և գտեք Medi-Cal ատամնաբույժ ձեր մոտակա SmileCalifornia.org-ում կամ զանգահարեք **1-800-322-6384** հեռախոսահամարով: Medi-Cal Dental-ի մոտ այցելությունը անվճար է կամ ունի ցածր արժեք: Նշանակեք ձեր հանդիպումն այսօր:

SmileCalifornia.org | 1-800-322-6384

ՀՂԻՈՒԹՅՈՒՆ

Բերանի խոռոչի լավ խնամքն օգնում է կանխել հղիության ընթացքում առաջացած խնդիրները: Որպես Medi-Cal ծրագրին անդամագրված՝ Դուք ապահովագրված եք հղիության ընթացքում և ձեր երեխայի ծնվելուց հետո 12 ամսվա ընթացքում:

ՄԵԾԱՀԱՍՍԱԿՆԵՐ

Տարիքի հետ Ձեր առողջության մասին հոգ տանելն ավելի կարևոր է դառնում: Ատամնաբույժին պարբերաբար այցելելը նպաստում է Ձեր լնդերի ու ատամների ամրությունը և բարելավում է Ձեր ընդհանուր առողջական վիճակը:

ՏԱՐԵՑՆԵՐ

Տարեցները հակված են լնդերի հիվանդությունների և բերանի խոռոչի առողջության հետ կապված այլ խնդիրների: Դուք կարող եք նվազեցնել ռիսկը՝ օրական երկու անգամ խոզանակով մաքրելով Ձեր ատամները, ամեն օր ատամ մաքրելու թել օգտագործելով և Ձեր ատամնաբույժին պարբերաբար այցելելով:

